ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԺ յոթերորդ գումարման երկրորդ նստաշրջանի ընթացքում

արտաքին հարաբերությունների ոլորտում

խորհրդարանական գործունեության վերաբերյալ

Յոթերորդ գումարման Ազգային ժողովում գործում են **4 միջխորհրդարանական հանձնաժողովներ.**

- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Կիպրոսի Հանրապետության ներկայացուցիչների պալատի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողով

Յոթերորդ գումարման Ազգային ժողովում գործում են **60 միջխորհրդարանական բարեկամության խմբեր:**

2019 թվականի ապրիլի 15-ին արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ ՀՀ Ազգային ժողովում ստեղծվել է Հայաստան - Կոստա Ռիկա միջխորհրդարանական բարեկամության խումբը:

Ընթացիկ տարում աշխատանքներ են տարվում **Հայաստան – Սինգապուր, Հայաստան – Եթովպիա, Հայաստան - Ռուանդա** միջխորհրդարանական բարեկամության խմբեր ստեղծելու ուղղությամբ:

Նաև, հիմք ընդունելով Ազգային ժողովի յոթերորդ գումարման արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 15-ի թիվ 3 որոշումը, ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է կայացրել համաձայնություն տալ** Գվատեմալայի Հանրապետության Կոնգրեսի եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի միջեւ միջխորհրդարանական համաձայնագիր ստորագրելու մասին առաջարկությանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱԳՆԱ ԱՅՑԵՐ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

- ✓ **ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այց Արցախի Հանրապետություն - փետրվարի 8-10, Ստեփանակերտ**

- ✓ **ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այց Ռուսաստանի Դաշնություն - Փետրվարի 25-27, Մոսկվա**

2019թ. փետրվարի 25-27-ը ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հրավերով աշխատանքային այցով Մոսկվայում է գտնվել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակության կազմում եղել են ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ալեն Սիմոնյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը, ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Միքայել Մելքումյանը, ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, ԱԺ «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցը, ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանը, ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության քարտուղար Արման Աբովյանը:

Փետրվարի 25-ին ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդում տեղի է ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության հանդիպումը ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հետ: Ռուսական կողմից հանդիպմանը մասնակցել են ՌԴ ՌԺ Դաշնության խորհրդի միջազգային գործերով կոմիտեի նախագահ Կոնստանտին Կոսաչովը, կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Ջաբարովը, Հայ-ռուսական միջխորհրդարանական հանձնաժողովի անդամներ Նիկոլայ Ռիժկովը, Իգոր Չերնիշփնկոն, Իգոր Կագրամանյանը, Վլադիմիր Լիտյուշկինը, Տատյանա Կուսայկոն, ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի նախագահի օգնական Ալեքսանդր Ալեքսեևը, ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի աշխատակազմի միջազգային կապերի վարչության պետ Նիկոլայ Պարուզինը, ՌԴ արտաքին գործերի նախարարության ԱՊՀ երկրների չորրորդ դեպարտամենտի փոխտնօրեն Իգոր Գրոմիկոն:

Փետրվարի 27-ին ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի լիագումար նիստի ժամանակ հադես է եկել ելույթով: Այս համատեքստում, մինչ ելույթը, Վալենտինա Մատվիենկոն նշել է, որ փետրվարի 27-ին Դաշնության խորհրդի լիագումար նիստում ՀՀ Ազգային ժողովի նախագահի սպասվող ելույթը բացառիկ բնույթ ունի:

Այցի համատեքստում ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը ՌԴ Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյին հրավիրել է այցելել Երևան:

Վալենտինա Մատվիենկոյի հետ հանդիպման ընթացքում կողմերը պատրաստակամություն են հայտնել միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահությունը վստահել երկու երկրների խորհրդարանների փոխնախագահներին: Միեւնույն ժամանակ կարեւորվել է երկու օրենսդիր մարմինների գործընկեր հանձնաժողովների մակարդակով հարաբերությունների ամրապնդումը:

- ✓ **ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակության այց Բունդեսթագ - Մարտի 18-22, Բեռլին**

Խորհրդարանական պատվիրակության կազմում են եղել ՀՀ ԱԺ պատգամավորներ Ռուբեն Ռուբինյանը, Լիլիթ Մակունցը, Էդմոն Մարուքյանը, Նաիրա Զոհրաբյանը եւ Ծովինար Վարդանյանը:

Այցի օրակարգում խորհրդարանի ղեկավարը հանդիպումներ է ունեցել Բունդեսթագի նախագահ Վոլֆգանգ Շոյբլեի, Բունդեսթագի փոխնախագահ Պետրա Պաուի, Գերմանիա-Հարավային Կովկաս բարեկամական խմբի ղեկավար Յոհաննես Կարսի, Բեռլինի խորհրդարանի նախագահ Ռալֆ Վիլանդի, Սաար երկրամասի Լանդթագի նախագահ Շտեֆան Տոսկանիի, Գերմանահայկական ֆորումի նախագահության հետ:

Գերմանիայում պաշտոնական այցով գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 20-ին հանդիպումներ է ունեցել Միջազգային քաղաքականության եւ անվտանգության ինստիտուտում (SWP), որից հետո հանդիպել է Արտաքին գերատեսչության Եվրոպայի գծով պետնախարար Միխայել Ռոթի հետ:

Արարատ Միրզոյանի գլխծավորած պատվիրակությանն ողջունել են Բունդեսթագի նիստի ընթացքում:

Կարևորվել է Գերմանիայի կողմից Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շուտափույթ վավերացումը:

Առաջարկվել է աշխատանքներ սկսել ՀՀ-ում հայ-գերմանական համալսարանի հիմնադրման ուղղությամբ:

Փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել ԵՊՀ-ի և Զաարլանդի համալսարանի միջև համագործակցության վերաբերյալ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Բունդեսթագի կողմից ՀՀ ԱԺ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման կապակցությամբ:

- ✓ **ՀՀ ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակության այց Արցախի Հանրապետություն, Մայիսի 8-10, Ստեփանակերտ**

- ✓ **Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության այցը Լեհաստան - հունիսի 3-5-ը, Վարշավա**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը հունիսի 3-5-ը եղել է Վարշավայում՝ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի պետությունների խորհրդարանների նախագահների 4-րդ գագաթնաժողովին մասնակցելու նպատակով, որի ընթացքում հանդես է եկել ելույթով:

Այցի շրջանակում ԱԺ նախագահը հանդիպել է Լեհաստանի Հանրապետության Սեյմի մարշալեկ Մարեկ Կուխչինսկու հետ:

Պատվիրակության կազմում է եղել նաև ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը:

ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, Հայաստան-Լեհաստան խորհրդարանական բարեկամական խմբի ղեկավար Ռուբեն Ռուբինյանը հունիսի 4-ին Վարշավայում հանդիպել է ՀՀ ԱԺ-ի հետ Լեհաստանի խորհրդարանական բարեկամության խմբի ղեկավար Թադեուշ Վոժնյակի հետ:

- ✓ **ՀՀ ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակության այց Ստոկհոլմ, Շվեդիա - հունիսի 10-13**

Պատվիրակության կազմում եղել են ՀՀ ԱԺ Հայաստան-Շվեդիա բարեկամական խմբի ղեկավար Հռիփսիմե Գրիգորյանը, ԱԺ պատգամավորներ Հովհաննես Հովհաննիսյանը, Սոնա Ղազարյանը, Արման Աբովյանը եւ Աննա Կոստանյանը:

Այցի շրջանակում Արարատ Միրզոյանը հանդիպումներ է ունեցել Շվեդիայի թագավոր Նորին Մեծություն Կարլ XVI Գուստավի հետ, Ռիկսդագի խոսնակ Անդրեաս Նորլենի և խորհրդի անդամների , Արտաքին գործերի նախարար Մարգո Ուոլսթրոմի, Միջազգային զարգացման համագործակցության նախարար Փիթեր Էրիքսոնի, ԵՄ գործերի նախարար Հանս Դալգրենի հետ:

Շվեդիա կատարվելիք այցից առաջ Շվեդիայի Ռիկսդագը վավերացրել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:

Այցից անմիջապես հետո Շվեդիայի Կառավարությունը փոփոխության է ենթարկել տարածաշրջանային համագործակցության ձևաչափը, ինչը հնարավորություն է տալիս համագործակցության երկկողմ ծրագրերի մշակման:

Այցի արդյունքում Շվեդիան համաձայնել է նաև միջոցներ հատկացնել ՀՀ ԱԺ ինստիտուցիոնալ կարիքների կատարելագործման համար:

- ✓ **Պառլամենտարիզմի զարգացմանը նվիրված միջազգային համաժողով - հուլիսի 1-2, Մոսկվա**

Մասնակցությունը միջազգային համաժողովին տեղի է ունեցել ՌԴ ՌԴ ԴԺ Պետական դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի հրավերով:

Պատվիրակության կազմում եղել են ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Վահե Էնֆիաջյանը, ՀՀ ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Միքայել Մելքումյանը, ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն ղեկավար Էդմոն Մարուքյանը, ՀՀ ԱԺ նախագահի օգնական Վահան Կոստանյանը, ՀՀ ԱԺ աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Արման Իսրայելյանը, ՀՀ ԱԺ աշխատակազմի արարողակարգի վարչության պետ Արտակ Հովհաննիսյանը և ուղեկցող անձինք:

Համաժողովի գլխավոր թեմաներն են եղել միջազգային անվտանգության և կայունության հարցերը, թվային տնտեսության, երիտասարդության և բնապահպանական քաղաքականության զարգացումը, միջխորհրդարանական ինստիտուտների աշխատանքի հեռանկարները: Համաժողովի աշխատանքներին մասնակցել են 132 պետությունների ներկայացուցիչներ, շուրջ 800 խորհրդարանականներ և փորձագետներ, որոնց թվում էին Միջխորհրդարանական միության նախագահ Գաբրիելա Կուևաս Բարոնը, Պանաֆրիկյան խորհրդարանի

նախագահը, Բալթյան ծովի խորհրդարանական խորհրդաժողովի նախագահ Յորգեն Պետտերսոնը և այլոք:

ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը «Պառլամենտարիզմի զարգացում» երկրորդ միջազգային համաժողովի բացմանը հանդես է եկել ելույթով:

Հուլիսի 2-ին «Պառլամենտարիզմի զարգացում» երկրորդ համաժողովի եզրափակիչ մասում մասնակիցներն ընդունել են ամփոփիչ հռչակագիր:

- ✓ **ՀՀ ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակության այցը Նիկոսիա - հուլիսի 3-6**

Այցի շրջանակում եղել են հանդիպումներ խորհրդարանի ղեկավար Դեմետրիս Սիլուրիսի, Համայն Կիպրոսի Արքեպիսկոպոս Խրիզոստոմոս Երկրորդի, ՀՀ Ազգային ժողովի եւ Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի անդամների, Կիպրոսի Հանրապետության պաշտպանության նախարար Սավվաս Անգելիդիսի հետ, որը հանդիսանում էր Կիպրոսի նախագահի պարտականությունների ժամանակավոր պաշտոնակատարը, ինչպես նաև, Նիկոսիայի քաղաքապետի ու հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Նիկոսիայում Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության կազմում եղել են ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մխիթար Հայրապետյանը, ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, ԱԺ պատգամավորներ Շաքե Իսայանը, Աննա Կոստանյանը, Ծովինար Վարդանյանը եւ Հռիփսիմե Գրիգորյանը:

Հուլիսի 5-ին ԱԺ նախագահը Կիպրոսի Ներկայացուցիչների պալատում հանդես է եկել ելույթով:

- ✓ **ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի աշխատանքային այցն ԱՄՆ – հուլիսի 14-18**

Աշխատանքային այցով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը Վաշինգտոնում մասնակցել է House Democracy Partnership կազմակերպության Առաջնորդների ֆորումի աշխատանքներին: Ֆորումի ընթացքում Ազգային ժողովի նախագահն ելույթ է ունեցել «Օրենսդիր մարմնների դերը. Օրենսդիր մարմինների անկախության կարևորությունը բռնապետության վտանգի կանխման համատեքստում» թեմայով:

ԱԺ խոսնակին հղված հրավերը՝ վերոնշյալ ֆորումին մասնակցելու համար չափազանց կարևոր ազդակ է HDP-ին անդամակցության համար:

Ելույթից հետո ներկա ԱՄՆ պետական եւ փորձագիտական շրջանակների ներկայացուցիչների հետ ծավալվել է շահագրգիռ քննարկում Հայաստանի արտաքին քաղաքականության, մեր երկրում սպասվող դատական համակարգի բարեփոխումների, հայ-ամերիկյան երկկողմ օրակարգի զարգացման եւ այլ հարցերի շուրջ:

ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանությունում Արարատ Միրզոյանն ընդունել է Միջազգային հանրապետական ինստիտուտի փոխնախագահ Սքոթ Մեսթիքին: Կողմերը քննարկել են Ազգային ժողովի կարողությունների զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի օրակարգը:

Օրվա ավարտին Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Վաշինգտոնում հայ համայնքի ներկայացուցիչների հետ եւ մտքեր փոխանակել Հայաստանում տեղի ունեցող վերջին զարգացումների եւ խորհրդարանի աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը հուլիսի 16-ին հանդիպել է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի և ԱՄՆ Սենատի մեծամասնության հանրապետական ղեկավար Միչ Մաքքոնելի հետ:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն աշխատանքային այցի շրջանակում Վաշինգտոնում հանդիպումներ է ունեցել Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի եւ Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցիչների հետ:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը Վաշինգտոնում հանդիպել է ԱՄՆ Կոնգրեսում հայկական հարցերով խմբի ներկայացուցիչներին հետ, որոնց թվում էին Էլիոթ Էնգելը, Ֆրանկ Փալոնը, Ջեքի Սփիրը եւ այլք:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած աշխատանքային այցի շրջանակում Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը հանդիպումներ է ունեցել հայ համայանքի ներկայացուցիչների հետ Բոստոնում և Նյու Յորքում:

<u>ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ</u>

✓ **ՀՀ ԱԺ և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 31-րդ նիստ**, Հունիսի 27-28, Մոսկվա

Պատվիրակության կազմում են եղել ԱԺ պատգամավորներ Անուշ Բեղլոյանը («Իմ Քայլ» խմբակցություն), Սոս Ավետիսյանը («Իմ Քայլ» խմբակցություն), Արման Աբովյանը («Բարգավաճ Հայաստան» խմբակցություն) եւ Արման Բաբաջանյանը («Լուսավոր Հայաստան» խմբակցություն):

Այցի շրջանակում պատվիրակությունը հանդիպում է ունեցել ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի նախագահի տեղակալ Յուրի Վորոբյովի հետ: Ռուսաստանյան կողմից հանդիպմանը ներկա են եղել ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նախագահ Վիկտոր Բոնդարեւը, միջազգային հարցերով կոմիտեի ներկայացուցիչներ Վլադիմիր Ջաբարովը, Սերգեյ Կիսլյակը, Իգոր Ղահրամանյանը, Վլադիմիր Լուկինը, Օլգա Տիմոֆեեւան եւ այլոք:

Համատեղ նիստի արդյունքներով կողմերն ընդունել են համատեղ հայտարարություն:

<u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

<u>ԵԽԽՎ</u>

- ✓ **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանի աշխատանքներ**

/2019 հունվարի 21-25, Ստրասբուրգ, Ֆրանսիա/

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանի աշխատանքներին ԱԺ պատվիրակությունը մասնակցել է հետևյալ կազմով՝ պատվիրակության ղեկավար Ռուբեն Ռուբինյան, պատվիրակության անդամներ՝ Վլադիմիր Վարդանյան, Նաիրա Զոհրաբյան, Միքայել Մելքումյան, Էդմոն Մարուքյան, Հովհաննես Իգիթյան, Տաթևիկ Հայրապետյան, Սոս Ավետիսյան:

Պաշտոնական և աշխատանքային հանդիպումներ

Նստաշրջանի ընթացքում տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի պատվիրակությունների հանդիպում՝ վերջիններիս նախաձեռնությամբ:

Հայկական պատվիրակությունը հանդիպեց նաև ԵԽԽՎ Նախագահ Լիլիան Մորի Պասքիեի հետ: Հանդիպման ընթացքում ԵԽԽՎ Նախագահը ողջունեց Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները՝ շեշտելով, որ դրանք անցան խաղաղ կերպով: “Սա շատ կարևոր էր և օրինակ է ծառայում ողջ աշխարհի համար”: Տիկին Պասքիեն ասաց,

որ քաղաքական մեծամասնությունը կրում է զգալի պատասխանատվություն, որը պետք է աշխատի և խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմադիր ուժերի հետ:

Ռ. Ռուբինյանը ներկայացրեց երկրում տիրող քաղաքական իրավիճակը, խոսեց Կառավարության ծրագրերի և հետագա անելիքների մասին:

Կողմերն անդրադարձան ԵԽԽՎ-ում Լեռնային Ղարաբաղի հիմնախդրի հարցին, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների փոխհարաբերություններին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև ԵԽԽՎ Նախագահի 2019թ. մարտին Հայաստան կայանալիք այցի մասին: Քննարկվեց այցի ծրագիրը:

Նստաշրջանի ընթացքում ԵԽԽՎ-ում ԱԺ պատվիրակության ղեկավար Ռ. Ռուբինյանը ունեցել է հետևյալ հանդիպումները՝

- ✓ ԵԽԽՎ-ում Եվրոպական պահպանողականների քաղաքական խմբի ղեկավար Լիդըլ Գրեյնջերի /ՄԹ/ հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց համագործակցությունը հայկական պատվիրակության հետ, Հայաստանի պատվիրակների խմբին անդամակցելու հարցը, Վեհաժողովին առնչվող այլ խնդիրներ;
- ✓ ԵԽԽՎ-ում Սոցիալիստների, դեմոկրատների և կանաչների քաղաքական խմբի ղեկավար Ֆրանկ Շվաբեի /Գերմանիա/ և Սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Շտեֆան Շեննախի հետ: Զրուցակիցների խնդրանքով Ռ. Ռուբինյանը խոսեց Հայաստանում տեղի ունեցող վերջին զարգացումների մասին, ներկայացրեց “Քաղաքացիական պայմանագիր” կուսակցությունը, հետագա անելիքները: Հանդիպման ընթացքում քննարկվեց համագործակցությունը հայկական պատվիրակության հետ, Հայաստանի պատվիրակների խմբին անդամակցելու հարցը, Վեհաժողովին առնչվող այլ խնդիրներ;
- ✓ ԵԽԽՎ-ում ԵԺԿ քաղաքական խմբի ղեկավար Ալեքսանդր Պոչեյի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց համագործակցությունը հայկական պատվիրակության հետ, Հայաստանի պատվիրակների խմբին անդամակցելու հարցը, Վեհաժողովին առնչվող այլ խնդիրներ;
- ✓ ԵԽ անդամ պետությունների միջև հակամարտությունների հարցերի ենթահանձնաժողովի նախագահ Էգիդիուս Վարեյկիսի հետ /ԵԺԿ, Լիտվա/: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ենթահանձնաժողովի հետագա աշխատանքները, օրակարգային հարցերը;
- ✓ Ճանաչողական հանդիպումներ ԵԽԽՎ-ում Գերմանիայի պատվիրակության ղեկավար Անդրեաս Նիկի, Չեխիայի պատվիրակության ղեկավար Միրոսլավա Նեմցովայի, Քաղաքական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռիա Ումեն-Ռույտենի /ԵԺԿ, Նիդերլանդներ/ հետ:

- ✓ **ԵԽԽՎ մշտական հանձնաժողովի նիստ** - Մարտի 1, Փարիզ
- ✓ **ԵԽԽՎ Մշակույթի, գիտության, կրթության և լրատվամիջոցների հարցերի հանձնաժողի նիստ -** Մարտի 4, Գրանադա, Իսպանիա
- ✓ **ԵԽԽՎ Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողի նիստ** – Մարտի 4, Փարիզ
- ✓ **ԵԽԽՎ Քաղաքական ժողովրդավարության հարցերի հանձնաժողի նիստ** - Մարտի 5, Փարիզ
- ✓ **ԵԽԽՎ Մոնիտորինգի հանձնաժողի նիստ** - Մարտի 6, Փարիզ
- ✓ **ԵԽԽՎ Իրավահավասարության հարցերի հանձնաժողի նիստ** - Մարտի 7, Փարիզ
- ✓ **ԵԽԽՎ Սոցիալական, առողջապահության և կայուն զարգացման հարցերի հանձնաժողի նիստ** - Մարտի 19, Փարիզ
- ✓ **ԵԽԽՎ Միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հարցերի հանձնաժողի նիստ** - Մարտի 26, Փարիզ
- ✓ **ԵԽԽՎ գարնանային նստաշրջան** – Ապրիլի 8-12, Ստրասբուրգ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի գարնանային նստաշրջանի աշխատանքներին ԱԺ պատվիրակությունը մասնակցել է հետևյալ կազմով՝ պատվիրակության ղեկավար Ռուբեն Ռուբինյան, պատվիրակության անդամներ Վլադիմիր Վարդանյան, Նաիրա Զոհրաբյան, Միքայել Մելքումյան, Էդմոն Մարուքյան, Հովհաննես Իգիթյան, Տաթևիկ Հայրապետյան, Սոս Ավետիսյան:

ՀՀ Վարչապետի այց ԵԽ

Ապրիլի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Եվրոպայի Խորհուրդ: Նույն օրը վարչապետը ելույթ ունեցավ Վեհաժողովում և պատասխանեց ԵԽԽՎ անդամների հարցերին, որոնք մասնավորապես նվիրված էին՝ հարևան երկրների հետ փոխհարաբերություններին /ԵԺԿ խմբի անունից/, նախկին պաշտոնյաների նկատմամբ դատավարություններին /Սոցիալիստների խմբի անունից/, փոխհարաբերություններին Իրանի հետ /Պահպանողականների խմբի անունից/, ապօրինի գույքի բռնագրավման խնդրին և այս ոլորտում Հայաստանի համագործակցությանը միջազգային գործընկերների հետ /Լիբերալ-դեմոկրատների խմբի անունից/, ՀՀ-ի հարաբերություններին Ռուսաստանի և ԵՄ-ի հետ՝ որպես դրական օրինակ միջազգային փորձում /Միավորված եվրոպական ձախերի խմբի անունից/, 2013թ-ին ԵԽ-ում նախագահության ժամանակ Հայաստանի կողմից հռչակված առաջնահերթությունների և նպատակների՝ Վեհաժողովի կողմից իրականացմանը /Ազատ դեմոկրատների խմբի անունից/: Հնչեցին նաև հարցեր Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման, կոռուպցիայի դեմ պայքարի, սեռական փոքրամասնությունների իրավունքների, ՄԱԿ-ում Ռուսաստանի և Ղրիմի վերաբերյալ

բանաձևերի շուրջ Հայաստանի քվեարկության, ՀՀ արտաքին քաղաքական վեկտորների վերաբերյալ:

Ելույթից հետո ԵԽԽՎ-ում բացվեց «Հայաստանի թավշյա հեղափոխությանը» նվիրված ցուցահանդես: Ցուցահանդեսը բացեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԵԽԽՎ նախագահ Լիլիան Մորի Պասքիեն և ԵԽ գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը:

Աշխատանքային հանդիպումներ

ԱԺ պատվիրակությունը հանդիպում ունեցավ ԵԽԽՎ Գլխավոր քարտուղարի թեկնածու, Խորվաթիայի փոխվարչապետ, ԱԳ նախարար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ: Հանդիպման ընթացքում տիկին Բուրիչը ներկայացրեց իր ծրագիրը, պատասխանեց հայ պատվիրակների հարցերին:

- ✓ **ԵԽԽՎ սոցիալական, առողջապահության և կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստեր** - Մայիսի 13-14, Վիեննա

- ✓ **ԵԽԽՎ մշակույթի հարցերի հանձնաժողով** - Մայիսի 27- 28, Փարիզ

- ✓ **ԵԽԽՎ միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հարցերի հանձնաժողովի նիստեր** - Մայիսի 28-29, Ցյուրիխ

- ✓ **ԵԽԽՎ Մոնիտորինգի հարցերի հանձնաժողովի նիստեր** - Մայիսի 16-17, Լոնդոն

- ✓ **ԵԽԽՎ քաղաքական և ժողովրդավարության հարցերի հանձնաժողովի նիստեր** - Մայիսի 20, Փարիզ

- ✓ **ԵԽԽՎ Մշտական հանձնաժողովի նիստ** - Մայիսի 24, Փարիզ

- ✓ **ԵԽԽՎ իրավահավասարության հարցերի հանձնաժողովի նիստ** - Հունիս 5-6, Բելգրադ /Սերբիա/

- ✓ **ԵԽԽՎ ամառային նստաշրջան** - **/2019թ. հունիսի 24-28, Ստրասբուրգ, Ֆրանսիա/**

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ամառային նստաշրջանի աշխատանքներին ԱԺ պատվիրակությունը մասնակցել է հետևյալ կազմով՝ պատվիրակության ղեկավար Ռուբեն Ռուբինյան, պատվիրակության անդամներ Վլադիմիր Վարդանյան, Նաիրա Զոհրաբյան, Միքայել Մելքումյան, Էդմոն Մարուքյան, Հովհաննես Իգիթյան, Տաթևիկ Հայրապետյան, Սոս Ավետիսյան:

Աշխատանքային հանդիպումներ

Նստաշրջանի ընթացքում ԵԽԽՎ-ում ԱԺ պատվիրակության ղեկավար Ռ. Ռուբինյանն ունեցել է հետևյալ հանդիպումները՝ Բուլղարիայի պատվիրակության ղեկավար Ջեմա

Գրոզդանովայի, Ավստրիայի պատվիրակության անդամ Աքսել Կասեգերի, Մալթայի պատվիրակության ղեկավար Էմանուել Մալիայի, Լիխտենշտայնի պատվիրակ Գունտեր Վոգտի, Շվեյցարիայի պատվիրակության ղեկավար Ֆիլիպո Լոմբարդիի, Սերբիայի պատվիրակության ղեկավար Ստեֆանա Միլադինովիչի, Վրաստանի պատվիրակ Սոֆիո Կացարավայի հետ:

Քաղաքական խմբեր

Հունիսյան նստաշրջանի ընթացքում ԱԺ պատվիրակության՝ ԵԽԽՎ քաղաքական խմբերում չընդգրկված պատգամավորներն անդամակցեցին հետևյալ քաղաքական խմբերին՝

Եվրոպայի ժողովրդական կուսակցություն /ԵԺԿ/ - Ռուբեն Ռուբինյան, Վլադիմիր Վարդանյան, Տաթևիկ Հայրապետյան

Սոցիալիստների և կանաչների խումբ – Սոս Ավետիսյան

Լիբերալների և դեմոկրատների ալյանս /ALDE/ - Հովհաննես Իգիթյան

- ✓ **ԵԽԽՎ մշակույթի հարցերի ենթահանձնաժողովի նիստ** - Հունիսի 21, Բեռն

<u>ԵՎՐԱՆԵՍԹ</u>

- ✓ **Եվրանեսթ ԽՎ 4 հանձնաժողովների նիստեր -** Հունվարի 28-29, Բրյուսել

2019 թ. հունվարի 28-29-ը Բրյուսելում տեղի ունեցան Եվրանեսթ ԽՎ տնտեսական ինտեգրման, իրավական մոտարկման և ԵՄ քաղաքականությունների հետ համապատասխանեցման հարցերի, սոցիալական, աշխատանքի, կրթության, մշակույթի և քաղաքացիական հասարակության հարցերի, քաղաքական, մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերի, էներգետիկ անվտանգության հարցերի հանձնաժողովների համատեղ նիստերը, ինչպես նաև Բելառուսի հարցերով և Ասոցացման համաձայնագրի հարցերով աշխատանքային խմբերի նիստերը: Հայկական պատվիրակությունն ամբողջ կազմով մասնակցեց վերոնշյալ միջոցառումներին:

Պատվիրակության կազմում են եղել պատգամավորներ՝ Գայանե Աբրահամյան, Արման Եղոյան, Միքայել Զոլյան, Հերիքնազ Տիգրանյան, Էդգար Առաքելյան, Կորյուն Մկրտչյան, Վահե Էնֆիաջյան, Նոռա Առուստայան, Տարոն Սիմոյան:

Նույն օրը տեղի է ունեցել Ասոցացման համաձայնագրի հարցերով ժամանակավոր աշխատանքային խմբի նիստը, որին հայկական պատվիրակությունը մասնակցեց դիտորդի կարգավիճակով:

Հունվարի 29-ին կայացավ Եվրանեսթ ԽՎ քաղաքական, մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերի հանձնաժողովի, ինչպես նաև էներգետիկ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստը:

ԵԱՀԿ շրջանակում տեղի է ունեցել ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավարի փոփոխություն, ինչի արդյունքում Մխիթար Հայրապետյանին փոխարինում է Գայանե Աբրահամյանը:

<u>ԵԱՀԿ</u>

- ✓ **ԵԱՀԿ ԽՎ ձմեռային նստաշրջան** - Փետրվարի 21-22, Վիեննա

2019թ. փետրվարի 21-22-ը Վիեննայում տեղի ունեցավ ԵԱՀԿ ԽՎ ձմեռային նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցել են ԵԱՀԿ ԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար Հայկ Կոնջորյանը, պատվիրակության անդամներ Տիգրան Ուրիխանյանը, Մարիա Կարապետյանը, Համազասպ Դանիելյանը, Անի Սամսոնյանը, պատվիրակության քարտուղար Անահիտ Գասպարյանը:

Պաշտոնական հանդիպումներ

ԵԱՀԿ ԽՎ նիստի շրջանակներում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար Հ.Կոնջորյանը հանդիպել է ԵԱՀԿ ԽՎ նախագահ Գ.Ծերեթելի հետ:

- ✓ **ԵԱՀԿ ԽՎ: Համաժողով հակամարտությունների վերաբերյալ**, Մայիս, Գերմանիա

- ✓ **ԵԱՀԿ ԽՎ տարեկան նստաշրջան** - Հուլիսի 2-9, Լյուքսեմբուրգ

Պատվիրակության կազմում եղել են՝ ԵԱՀԿ ԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ԵԱՀԿ ԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության անդամներ, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Անի Սամսոնյանը, ՀՀ ԱԺ պատգամավորներ Տիգրան Ուրիխանյանը, Մարիա Կարապետյանը, Համազասպ Դանիելյանը:

Հայ խորհրդարանականների ջանքերով կանխվել է ադրբեջանական խավիարային դիվանագիտության հերթական հակահայկական փաստաթղթի ընդունումը: ԱԳՆ աշխատակազմի, ՀՀ ԱԺ պատգամավորների շաբաթներ տեւած համակարգված, փաստարկված աշխատանքների արդյունքում շրջանառվող բանաձեւի նախնական տարբերակից դուրս է բերվել «Ադրբեջանի 7 շրջաններ» ձեւակերպումը:

Փաստաթղթում առանձին դրույթով ընդունվել է ֆրանսիացի պատգամավոր Ժան Բիզեի կողմից ներկայացված առաջարկը, ըստ որի՝ արձանագրվել է. «Ճանաչելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը, նպատակ ունենալով հասնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ եւ տեւական կարգավորմանը, ողջունելով Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների վերջին շրջանի կառուցողական երկխոսությունը, որը միտված է ստեղծել խաղաղությանը նպաստող միջավայր եւ ձեռնարկել միջոցառումներ մարդասիրական ոլորտում»: Մեկ այլ դրույթով քաջալերվել է Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդներին ակտիվացնել երկխոսությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության միջնորդության համատեքստում, եւ կիրառել կոնկրետ ու շոշափելի միջոցառումներ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ, եւ համաձայն Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնարար սկզբունքների՝ զերծ մնալ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից, հարգել տարածքային ամբողջականությունը, ժողովուրդների իրավահավասարությունը եւ ինքնորոշման իրավունքը:

ԵԱՀԿ ԽՎ-ի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովն ընդունել է դրույթ, որով ողջունվում է Իտալիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը եւ Ֆրանսիայի կողմից ապրիլի 24-ի սահմանումը որպես Հայոց ցեղասպանության հիշատակի օր՝ կոչ անելով այլ ազգային խորհրդարաններին եւս հետեւել այդ օրինակին:

<u>ԱՊՀ</u>

✓ **ԱՊՀ ՄԽՎ դիտորդական առաքելություն և մոնիտորինգ Մոլդովայի Խորհրդարանի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ կապված** - Փետրվարի 22-25, Քիշնև

Պատվիրակության կազմում եղել են պատգամավորներ Վահագն Հովակիմյանը, Արփինե Դավոյանը:

✓ **ԱՊՀ ՄԽՎ Էկոնոմիկայի և ֆինանսների, Վերահսկիչ բյուջետային, Մշակույթի, տեղեկատվության, տուրիզմի և սպորտի և Գիտության և կրթության մշտական հանձնաժողովների նիստեր (4 մշտական հանձնաժողով)** - Մարտի 14, Սանկտ-Պետերբուրգ

Պատվիրակության կազմում եղել են պատգամավորներ՝ Վարազդատ Կարապետյանը, Արթուր Գրիգորյանը, Արկադի Խաչատրյանը, Տիգրան Ուլիխանյանը, Անուշ Բեղլոյան, Արմեն Փամբուխչյանը:

✓ **ԱՊՀ ՄԽՎ խորհրդի և 49-րդ լիագումար նիստեր -** Ապրիլի 18-19, Սանկտ-Պետերբուրգ

Պատվիրակության կազմում եղել են՝ Արարատ Միրզոյանը, Ռուբեն Ռուբինյանը, Վլադիմիր Վարդանյանը, Վարազդատ Կարապետյանը, Գոռ Գևորգյանը, Անուշ Բեղլոյանը:

✓ **ԱՊՀ ՄԽՎ Քաղաքական հարցերի և միջազգային համագործակցության, Պաշտպանության և անվտանգության, Իրավական հարցերի մշտական հանձնաժողովների նիստեր (3 հանձնաժողովների նիստեր) -** Ապրիլի 18-19, Սանկտ-Պետերբուրգ

Պատվիրակության կազմում եղել են՝ Արարատ Միրզոյանը, Ռուբեն Ռուբինյանը, Վլադիմիր Վարդանյանը, Վարազդատ Կարապետյանը, Գոռ Գևորգյանը, Անուշ Բեղլոյանը:

✓ **ԱՊՀ ՄԽՎ Սոցիալական քաղաքականության և մարդու իրավունքների; պետականաշինարարության փորձի ուսումնասիրման և տեղական ինքնակառավարման և ագրարային քաղաքականության; բնական պաշարների և էկոլոգիայի հարցերով մշտական հանձնաժողովների նիստեր (3 հանձնաժողովների նիստեր) -** Մայիսի 30-31, Սանկտ-Պետերբուրգ:

Նիստերին մասնակցել են՝ համապատասխանաբար ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանը, ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Սերգեյ Բագրատյանը, ԱԺ պատգամավոր Էդվարդ Անդրեասյանը:

✓ **ԱՊՀ երիտասարդական միջխորհրդարանական վեհաժողովի արտագնա նստաշրջան - 2019թ. մայիսի 30-31, Կազան**, **ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի և ԱՊՀ երիտասարդական միջխորհրդարանական վեհաժողովի համատեղ նիստ:**

Մասնակցել են Նարեկ Մկրտչյանը, Վաղարշակ Հակոբյանը, Սոնա Ղազարյանը, Շաքե Իսայանը և Աննա Կոստանյանը:

✓ **ԱՊՀ ՄԽՎ դիտորդական առաքելություն և մոնիտորինգ Ղազախստանի Հանրապետություն արտահերթ նախագահական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ կապված** - Հունիսի 7-10-ը, Նուր-Սուլթան

Ղազախստանի Հանրապետությունում կայանալիք արտահերթ նախագահական ընտրությունների մշտադիտարկում անցկացնելու նպատակով ՀԱՊԿ ԽՎ-ի միջազգային դիտորդական առաքելության շրջանակում 2019 թ. հունիսի 8-10-ը ներառյալ Նուր-

Սուլթան (Ղազախստանի Հանրապետություն) է գործուղվել ՀՀ ԱԺ պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովը:

Ղազախստանի Հանրապետությունում կայանալիք արտահերթ նախագահական ընտրությունների մշտադիտարկում անցկացնելու նպատակով ԵԱՀԿ ԽՎ-ի դիտորդական առաքելության շրջանակում 2019 թ. հունիսի 6-10-ը ներառյալ Նուր-Սուլթան (Ղազախստանի Հանրապետություն) է գործուղվել ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Անի Սամսոնյանը:

Ղազախստանի Հանրապետությունում կայանալիք արտահերթ նախագահական ընտրությունների մշտադիտարկում անցկացնելու նպատակով ԱՊՀ ՄԽՎ-ի դիտորդական առաքելության շրջանակում 2019 թ. հունիսի 8-10-ը ներառյալ Նուր-Սուլթան (Ղազախստանի Հանրապետություն) է գործուղվել ՀՀ ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարազդատ Կարապետյանը:

<u>ՀԱՊԿ</u>

✓ **ՀԱՊԿ ԽՎ առընթեր փորձագիտա-խորհրդատվական խորհրդի, տեղեկատվական-վերլուծական և իրավական կենտրոնի, Քաղաքական հարցերի և միջազգային համագործակցության, Սոցիալ-տնտեսական և իրավական հարցերի, Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովների նիստեր** - Ապրիլի 16-17, Սանկտ- Պետերբուրգ

Պատվիրակության կազմում եղել են՝ Ալեն Սիմոնյանը, Անդրանիկ Քոչարյանը, Հովիկ Աղազարյանը, Տիգրան Ուրիխանյանը, Ալեքսանդր Ավետիսյանը, Հարություն Բաբայանը, Արման Աբովյանը:

✓ **ՀԱՊԿ ԽՎ խորհրդի արտագնա նիստ -** Մայիսի 20, Բիշքեկ

Պատվիրակության կազմում եղել են ՝ Արարատ Միրզոյանը, Ալեն Սիմոնյանը, Անդրանիկ Քոչարյանը:

Այցի շրջանակում ՀԱՊԿ ԽՎ խորհրդի նիստին մասնակցող պատվիրակությունների ղեկավարներին ընդունել է Ղրղզստանի Հանրապետության նախագահ Սոորոնբայ Ժեենբեկովը: Այցի շրջանակում տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի, Ղազախստանի

խորհրդարանի Մաջիլիսի նախագահ Նուրլան Նիգմատուլինի, Ղրղզստանի խորհրդարանի նախագահ Դաստանբեկ Ջումաբեկովի հետ:

ՄԻՋԽՈՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

- ✓ **Միջխորհրդարանական միության 140-րդ վեհաժողով**, Ապրիլի 6-10, Դոհա, Կատարի Պետություն

2019 թվականի ապրիլի 6-ից 10-ը Կատարի Պետության մայրաքաղաք Դոհայում տեղի ունեցավ Միջխորհրդարանական միության 140-րդ վեհաժողովը, որին մասնակցեց ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը հետևյալ կազմով՝ Լիլիթ Մակունց, Սրբուհի Գրիգորյան, Աննա Կարապետյան, Շաքե Իսայան, Միքայել Մելքումյան, Հովհաննես Հովհաննիսյան և Արման Բոշյան:

Ապրիլի 6-ին Լ. Մակունցը, Ս. Գրիգորյանը, Շ. Իսայանը և Ա. Կարապետյանը մասնակցեցին **Կին պատգամավորների ֆորումին**:

Միջխորհրդարանական 140-րդ վեհաժողովի ընդհանուր քննարկման թեման էր **«Խորհրդարաններն իբրև հարթակ հանուն խաղաղության, անվտանգության և օրենքի գերակայության համար կրթության խթանման համար»** հարցը:

Պաշտոնական հանդիպումներ

Միջխորհրդարանական միության 140-րդ վեհաժողովի շրջանակում Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն ապրիլի 7-ին հանդիպել է Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Դեմետրիս Սիլուրիսի հետ:

Ապրիլի 7-ին Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը Կատարում հանդիպել է միության գլխավոր քարտուղար Մարտին Չունգոնգի հետ:

Ապրիլի 8-ին վեհաժողովի ընդհանուր քննարկման ժամանակ ելույթ է ունեցել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը ապրիլի 8-ին հանդիպել է Բելգիայի Ներկայացուցիչների պալատի նախագահ Զիգֆրիդ Բրակեի հետ:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն ապրիլի 8-ի առավոտյան հանդիպեց Իրանի Իսլամական Հանրապետության Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հետ:

Նույն օրն **Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը հանդիպել է Միջխորհրդարանական միության նախագահ Գաբրիելա Կուեվաս Բարրոնի հետ:**

Միջխորհրդարանական միության 140-րդ վեհաժողովի շրջանակում, ինչպես միշտ, իր նստաշրջանը գումարեց **Խորհրդարանների գլխավոր քարտուղարների ասոցիացիան,** որին անդամակցելու հայտ էր ներկայացրել ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանը: Ապրիլի 8-ին նա դարձավ Խորհրդարանների գլխավոր քարտուղարների ասոցիացիայի անդամ:

Ամփոփում՝ Դոհայում Միջխորհրդարանական միության 140-րդ վեհաժողովին մասնակցեցին 2271 պատգամավորներ 160 երկրից: Մասնակցում էին 80 նախագահ և 40-ից ավելի փոխնախագահներ: Վեհաժողովի ընթացքում տեղի ունեցավ 68 նիստ, որտեղ քննարկվեցին միջազգային մտահոգության առարկա դարձած այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ զարգացումը, կրթությունը, խաղաղությունը, հակամարտությունների կարգավորումը և ահաբեկչությունը: Վեհաժողովն ընդունել է **Դոհայի հռչակագիրը** և երեք բանաձևեր:

ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

✓ **Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի միջազգային քարտուղարության նախագահների և զեկուցողների նիստ - Ապրիլի 3-4, Կիպրոս, Լիմասոլ**

Նիստի աշխատանքներին մասնակցեց Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ալեն Սիմոնյանը:

✓ **Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի նիստ - Հունիսի 19-23, Թբիլիսի**

Վեհաժողովի աշխատանքներին մասնակցել են ՈՒՄՎ-ում ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար Ալեն Սիմոնյանը, պատգամավորներ Գուրգեն Բաղդասարյանը, Արփինե Դավոյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Իվետա Տոնոյանը և պատվիրակության քարտուղար Արփինե Ֆեդոսեևան:

ՍԵՒԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

✓ **ՍԾՏՀ ԽՎ աշխատանքային խմբի նիստ** - Մարտի 5-7, Ստամբուլ

Պատվիրակության կազմ՝ Անուշ Բեղլոյան, պատվիրակության քարտուղար՝ արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ Գոհար Էվաջյան:

- ✓ **ՍԾՏՀ ԽՎ Իրավական և քաղաքական հարցերի հանձնաժողովի 53-րդ և ՍԾՏՀ ԽՎ Տնտեսական, առևտրի, տեխնոլոգիաների և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերի հանձնաժողովի 52-րդ համատեղ նիստ** - Մայիսի 14-17, Վրաստան

  Պատվիրակության կազմ՝ պատվիրակության ղեկավար Բաբկեն Թունյան, պատվիրակության անդամներ՝ Վահե Էնֆիաջյան, Արտակ Մանուկյան, պատվիրակության քարտուղար՝ արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ Գոհար Էվաջյան:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

- ✓ **Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի Եվրոպական տարածաշրջանի սեկցիաների ղեկավարների նիստ** - Ապրիլի 14-16, Աթենք

  Նիստի աշխատանքներին մասնակցել է ՖԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար Հովհաննես Իգիթյանը, պատվիրակության քարտուղար Էդուարդ Բադոյանը:

  ✓ **Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի լիագումար նստաշրջան նիստ -** Հուլիսի 4-9, Աբիջան (Կոտ դ՛Իվուար):

  ՀՀ ԱԺ պատվիրակությունը մասնակցել է հետևյալ կազմով՝ Հովհաննես Իգիթյան, ՖԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար, Մերի Գալստյան, ՖԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության անդամ, Էդուարդ Բադոյան, ՀՀ ԱԺ աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ, ՖԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության համաքարտուղար:

ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

- ✓ **ՆԱՏՕ ԽՎ Ռոուզ-Ռոթ սեմինար -** Ապրիլի 24-26, Բրյուսել

  Սույն թվականի ապրիլի 24-26-ը ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ Վիկտոր Ենգիբարյանը եւ Գեւորգ Գորգիսյանը մեկնել են Բրյուսել՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում կազմակերպված «Ռոզ-Ռոութ» սեմինարին:

  Բացի ՆԱՏՕ-ի ԽՎ անդամ պատվիրակություններից, սեմինարին մասնակցում էին նաև ՆԱՏՕ ԽՎ ասոցացված անդամ-երկրների պատվիրակությունները՝ Ադրբեջան, Բոսնիա-Հերցեգովինա, Հայաստանի Հանրապետություն, Մակեդոնիա, Մոլդովա, Շվեդիա,

Սերբիա, Վրաստան, Ուկրաինա: Պատվիրակություններով էին ներկայացված նաև Տարածաշրջանային անվտանգության և Միջերկրյածովյան ասոցացման անդամ երկրներից Հորդանանը և Մարոկկոն:

Պատվիրակության անդամները հանդիպել են ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղար Դեյվիդ Հոբբսի, ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մադլեն Մունի և Լիտվայի պաշտպանության նախկին նախարար և ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նախկին նախագահ Ռասա Յուկնևիչենեի հետ: Դեյվիդ Հոբսի և Մադլեն Մունի հետ քննարկվեց հաջորդ Ռոզ-Ռոութ սեմինարը Հայաստանում կազմակերպելու հնարավորության մասին, անդրադարձանք կազմակերպչական որոշ հարցերի:

- ✓ **ՆԱՏՕ ԽՎ ՆԱՏՕ-ի կողմնորոշման ծրագիր –** Հունիսի 30-հուլիսի 3

Պատվիրակության կազմում եղել են՝ ՀՀ ԱԺ պատգամավորներ Քրիստինե Պողոսյանը, Տիգրան Կարապետյանը, Սիփան Փաշինյանը, Գոռ Գեւորգյանը եւ Արեն Մկրտչյանը:

- ✓ **ՆԱՏՕ ԽՎ գարնանային նստաշրջան –** Մայիսի 31-հունիսի 3, Բրատիսլավա

2019 թվականի մայիսի 31-ից հունիսի 3-ը Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում տեղի է ունեցել ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի գարնանային նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցեց ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունը հետևյալ կազմով՝ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան (պատվիրակության ղեկավար), պատգամավորներ Գևորգ Գորգիսյան և Վիկտոր Ենգիբարյան: Պատվիրակությանն ուղեկցում էր Արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ Զաբելա Ղազարյանը (պատվիրակության քարտուղար):

<u>ՀՀ ԱԺ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ</u>

- ✓ **ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի միջազգային հարցերով կոմիտեի համատեղ նիստ**, Մայիսի 29-31, Մոսկվա

2019թ. մայիսի 29-31-ը Մոսկվայում էր գտնվում ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանի

գլխավորած պատվիրակությունը՝ ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի միջազգային գործերով կոմիտեի համատեղ նիստի անցկացման նպատակով: Պատվիրակության կազմում էին ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամներ Անուշ Բեղլոյանը, Սոս Ավետիսյանը, Արման Աբովյանը, Արման Բաբաջանյանը:

Համատեղ նիստի օրակարգում ընդգրկված են եղել հետևյալ հարցերը՝

1. **Միջազգային օրակարգի արդիական հարցերը. Հարավային Կովկասում գլոբալ և տարածաշրջանային անվտանգության մարտահրավերները**
2. **Հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը ԵԱՏՄ, ԱՊՀ և ՀԱՊԿ շրջանակներում**
3. **Միջազգային խորհրդարանական կառույցներում և միջազգային խորհրդարանական հարթակներում (ԱՊՀ ՄԽՎ, ՀԱՊԿ ԽՎ, ՄԽՄ, ՍԾՏՀ ԽՎ, ԵԽԽՎ, ՈՒԽՎ) ներկա իրավիճակը. Համագործակցություն և հեռանկարներ**
4. **Համատեղ հայտարարության նախապատրաստում և համաձայնեցում:**

ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի միջազգային հարցերով կոմիտեի համատեղ նիստի արդյունքներով կողմերն ընդունեցին ընդհանուր հայտարարություն:

Կողմերը որոշել են հաջորդ համատեղ նիստն անցկացնել Երևանում 2019թ. աշնանը:

- ✓ **Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի եվ Լեհաստանի Հանրապետության Սենատի արտաքին հարաբերությունների եվ Եվրոպական միության հարցերի հանձնաժողովի հետ համատեղ նիստ**, հուլիսի 2-4, Վարշավա, Լեհաստան

2019 թվականի հուլիսի 2-ից 4-ը Վարշավայում էր գտնվում ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռունինյանի գլխավորած պատվիրակությունը՝ ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի և Լեհաստանի Հանրապետության Սենատի արտաքին հարաբերությունների և ԵՄ հարցերով հանձնաժողովի համատեղ նիստի անցկացման նպատակով: Պատվիրակության կազմում էին ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամներ Անուշ Բեղլոյանը, Սոս Ավետիսյանը, Արման Բաբաջանյանը, Արման Աբովյանը:

Նիստի արդյունքում ստորագրվել է համատեղ հուշագիր:

<u>ՀՀ ԱԺ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐ</u>

- ✓ **Հայաստան-Ղազախստան բարեկամական խմբի այց** – Մայիսի 22-23, Նուր-Սուլթան, Ղազախստանի Հանրապետություն: Գործուղվել են բարեկամական խմբի ղեկավար Վաղարշակ Հակոբյանը, խմբի անդամներ՝ Միքայել Մելքումյանը, Անուշ Բեղլոյանը, Էդվարդ Անդրեասյանը, Վահագն Հովակիմյանը, Վահագն Թևոսյանը:

  Մայիսի 22-ին տեղի է ունեցել բարեկամական խմբի անդամների հանդիպումը Ղազախստանի Հանրապետության խորհրդարանի Ստորին պալատի՝ Մաժիլիսի նախագահի տեղակալ Վլադիմիր Բոժկոյի հետ: Հանդիպմանը ներկա էին Մաժիլիսի Ղազախստան-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի ղեկավար, Մաժիլիսի սոցիալ-մշակութային զարգացման կոմիտեի քարտուղար Բեյբիթ Մամրաևը, ՂՀ խորհրդարանի Մաժիլիսի միջազգային գործերի, պաշտպանության և անվտանգության կոմիտեի նախագահ Մուխտար Երմանը, խմբի անդամ Նարինե Միքայելյանը, խմբի այլ անդամները:

  Նույն օրը այցի շրջանակում հանդիպում է տեղի ունեցել նաև ՂՀ Վերին պալատի՝ Սենատի Ղազախստան-Հայաստան համագործակցության խմբի անդամների հետ: Հանդիպմանը ներկա էին բարեկմական խմբի ղեկավար ՂՀ Սենատի ագրարային հարցերի, բնօգտագործման և գյուղական տարածքների զարգացման կոմիտեի նախագահ Ժենիս Նուրգալիևը, խմբի անդամներ Աբդուլի Նուրալիևը, Դուլատ Կուստավլետովը: Հանդիպմանը ներկա էին նաև Բեյբիթ Մամրաևը և Նարինե Միքայելյանը:

  Մայիսի 23-ին ԱԺ պատվիրակություն այցելել է Ղազախստանի ժողովրդի ասամբլեա և հանդիպել հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

<u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ</u>

- ✓ «**Դիալոգ» կազմակերպության և Միջազգային գործերի ռուսաստանյան խորհուրդի համատեղ կազմակերպած միջազգային կլոր սեղան -** Փետրվարի 25-27-ը, Մոսկվա

  «Դիալոգ» կազմակերպության եւ միջազգային գործերի ռուսաստանյան խորհրդի կողմից համատեղ կազմակերպվող «Հայաստանը եւ Ռուսաստանը նոր քաղաքական պայմաններում» խորագրով միջազգային կլոր սեղանին մասնակցելու համար 2019 թ. փետրվարի 5-7-ը ներառյալ Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղվել են ՀՀ ԱԺ պատգամավորներ Անուշ Բեղլոյանը, Միքայել Զոլյանը, Սերգեյ Բագրատյանը, Ալեքսեյ Սանդիկովը եւ Արկադի Խաչատրյանը:

- ✓ **«Լազարյան ակումբի» նիստ** – Մարտի 5-6-ը, Մոսկվա

  Միջոցառմանը մասնակցել են Ալեքսեյ Սանդիկովը, Արկադի Խաչատրյանը:

- ✓ **2019թ. մարտի 27-29 /Դուշանբե/** - Երիտասարդների իրավունքների պաշտպանությանը և երիտասարդության զարգացման ոլորտում ներդրումներին

նվիրված տարածաշրջանային միջխորհրդարանական խորհրդաժողով: Մասնակցել է Հրաչյա Հակոբյանը:

- ✓ **2019թ. ապրիլի 2 /Մոսկվա/ -** ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի կողմից կազմակերպված «ՌԴ արտաքին քաղաքականության հումանիտար վեկտորը ժամանակակից փուլում» թեմայով խորհրդարանական լսումներ: Մասնակցել է Ալեքսեյ Սանդիկովը:

- ✓ **Եվրամիության քաղաքական և տնտեսական կառուցվածքի, ինչպես նաև ԵՄ Հարևանության քաղաքականության ապագային նվիրված միջխորհրդարանական կոնֆերանս** - Ապրիլի 1-2, Ռումինիա, Բուխարեստ: ՀՀ ԱԺ-ից մասնակցություն են ունեցել պատգամավորներ Արման Եղոյանը և Գայանե Աբրահամյանը: Խորհրդաժողովին մասնակցել են ԵՄ քսանութ երկրներից քսանչորսի, անդամության թեկնածու վեց երկներից չորսի և Արևելյան գործընկերության երկներից՝ Հայաստանի, Վրաստանու ու Մոլդովայի խորհրդարանական պատվիրակությունները, ինչպես նաև՝ ներկայացուցիչներ Եվրախորհրդարանում ներկայացված խորհրդարանական ուժերից ու եվրահանձնաժողովից:

- ✓ **«Կին քաղաքական առաջնորդներ» խորագրով գագաթաժողով,** հունիսի 25-27, Տոկիո

  Պատվիրակության կազմում են եղել ՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Լենա Նազարյանը, Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մանե Թանդիլյանը:

<u>ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ</u>

1. Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի ամենամյա ընթրիքին, որը կայացել է **2019 թվականի փետրվարի 5**-ին, ապրիլի 24-ը հայտարարել է Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր: Մակրոնը նաև նշել էր, որ անձամբ է տեղյակ պահել Էրդողանին իր որոշման մասին: Ի դեպ, Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը ճանաչել է 2001թ. օրենքի ուժով, իսկ 2016թ. քրեականացրել է Հայոց ցեղասպանության ժխտումը:

2. Իտալիայի Լացիո մարզի մարզային խորհուրդը **մարտի 18**-ի նիստում Մեծ Եղեռնի 104-րդ տարելիցին ընդառաջ միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանությունը որպես պատմական իրողություն ընդունելու մասին բանաձևը: Փաստաթղթում խորհրդի

անդամներն իրենց զորակցությունն են հայտնում հայ ազգին՝ պատմական ճշմարտության և մարդու իրավունքների պաշտպանության համար մղած պայքարում: Լացիոն դառնում է Իտալիայի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչած 136-րդ տարածքային ինքնակառավարման խորհուրդը:

3. Սույն թվականի **մարտի 20**-ին ԱՄՆ Ալաբամա նահանգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը՝ դառնալով Հայոց ցեղասպանությունը ճանաչած 49-րդ նահանգը: Ներկայում միայն Միսիսիպին է, որ դեռևս չի ճանաչել հայերի դեմ իրագործված ցեղասպանությունը:

4. 2019 թվականի **ապրիլի 11**-ին Իտալիայի խորհրդարանի ստորին պալատը բանաձև է ընդունել, որը կոչ է անում երկրի կառավարությանը պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը և միջազգային մակարդակում բարձրացնել այդ հարցը:

5. **Ապրիլի 12**-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչել է Իսպանիայի Բուրգոս քաղաքի քաղաքային խորհուրդը: Խորհրդի քաղաքական բոլոր խմբերը միաձայն հավանություն են տվել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու խնդրանքին:

6. Մոնրեալի քաղաքապետարանը **ապրիլի 15**–ին հատուկ նիստի ժամանակ ընդունել է բանաձև (հայտարարություն)՝ Հայոց Ցեղասպանության 104-րդ տարելիցի կապակցությամբ:

7. Պորտուգալիայի խորհրդարանն ապրիլի 26-ին ընդունել է որոշում՝ ճանաչելով Հայոց ցեղասպանությունը:

<u>ՀԸԳՀ ՎԱՎԵՐԱՑՐԱԾ ԵՐԿՐՆԵՐԸ</u>

ԵՄ անդամ երկրներից ՀԸԳՀ վավերացման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտին հասցնելու վերաբերյալ ԵՄ խորհրդին տեղեկացրել են Բուլղարիան, Կիպրոսը, Չեխիան, Գերմանիան, Դանիան, Էստոնիան, Միացյալ Թագավորությունը, Հունգարիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Լատվիան, Մալթան, Լեհաստանը, Ռումինիան, Ֆինլանդիան, Սլովակիան:

Ս.թ. ապրիլի 4-ին Գերմանիայի Բունդեսթագը վավերացրել է ՀԸԳՀ: Այժմ համաձայնագիրը ներկայացվել է Գերմանիայի նախագահի ստորագրությանը:

Ս.թ. մայիսի 2-ին ՀԸԳՀ վավերացվել է Շվեդիայի խորհրդարանի կողմից, սակայն դեռևս չեն տեղեկացրել ԵՄ խորհրդին:

Ս.թ. հունիսի 28-ին ՀԸԳՀ վավերացվել է Կիպրոսի խորհրդարանի կողմից: Նախատեսվում է համաձայնագրի ստորագրումը Կիպրոսի նախագահի կողմից:

Ս.թ. հուլիսի 8-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն (Խորհրդարանի ստորին պալատը) ընդունել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վավերացումը նախատեսող օրենքի նախագիծը: Օրենքի նախագծի ամբողջական ընդունման համար անհրաժեշտ է, որպեսզի այն ընդունվի նաև Սենատում և ստորագրվի նախագահի կողմից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԳՆԱ ԱՅՑԵՐ

✓ **ՌԴ ԴԺ Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի աշխատանքային այց - Փետրվարի 14-16**

Այցի շրջանակում Հայաստանի խորհրդարանի նախագահ Արարատ Միրզոյանը փետրվարի 15-ին ընդունել է Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահ Լեոնիդ Կալաշնիկովի գլխավորած պատվիրակությանը:

Փետրվարի 15-ին ՀՀ ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչները հանդիպել են Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահ Լեոնիդ Կալաշնիկովի գլխավորած պատվիրակության հետ:

ԱԺ «Իմ քայլը» խմբակցությունից հանդիպմանը մասնակցել են խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցը, անդամներ Ռուբեն Ռուբինյանը, Վաղարշակ Հակոբյանը, Արմեն Փամբուխչյանը, Վահե Հովհաննիսյանը, Նարեկ Մկրտչյանը, Ալեքսեյ Սանդիկովը եւ Գոռ Գեւորգյանը:

Փետրվարի 15-ին ՀՀ ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Միքայել Մելքումյանը եւ հանձնաժողովի անդամները հանդիպել են Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահ Լեոնիդ Կալաշնիկովի գլխավորած պատվիրակությանը:

✓ **Շվեդիայի Թագավորության խորհրդարանի երկրորդ փոխխոսնակ Լոտտա Յոնսոն Ֆորնարվեի գլխավորած պատվիրակության այց**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը մարտի 9-ին ընդունել է Շվեդիայի Թագավորության խորհրդարանի երկրորդ փոխխոսնակ Լոտտա Յոնսոն Ֆորնարվեի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանը:

Շվեդիայի Թագավորության խորհրդարանի երկրորդ փոխխոսնակ Լոտտա Յոնսոն Ֆորնարվեի գլխավորած պատվիրակությունը ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանի ուղեկցությամբ մարտի 9-ին այցելել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

✓ **ԵԱՀԿ գործող նախագահ Միրոսլավ Լայչակի գլխավորած պատվիրակության այց**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը մարտի 13-ին ընդունել է Սլովակիայի Հանրապետության արտաքին եւ եվրոպական գործերի նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Միրոսլավ Լայչակի գլխավորած պատվիրակությանը:

✓ **Հայաստանում գտնվող Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի գլխավորած պատվիրակության հետ հանդիպում**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը մարտի 14-ին ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպումն ընթացել է ընդլայնված կազմով:

✓ **ԵԽԽՎ համազեկուցողների այց - Մարտ 11-15**

ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը մարտի 14-ին ընդունել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Յուլյա Լյովոչկինային եւ Անդրեյ Շիրցելին:

Փաստահավաք առաքելությամբ Հայաստանում գտնվող Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Յուլյա Լյովոչկինան եւ Անդրեյ Շիրցելը մարտի 14-ին հանդիպումներ են ունեցել խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ: Հանդիպումներին ներկա է եղել ԵԽԽՎ մոնիթորինգի հանձնաժողովի քարտուղար Ալեքսիս Սալանսոնը:

✓ **ԵԽԽՎ նախագահի այց - մարտ 25-28**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը մարտի 27-ին ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Եվրոպայի խորհրդի խորհրդարանական

վեհաժողովի նախագահ Լիլիան Մորի Պասքիեին: Նախագահների ընդլայնված կազմով հանդիպմանը մասնակցել են նաեւ ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահներ, ԵԽԽՎ պատվիրակության եւ ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Եվրոպայի Խորհրդում ՀՀ մշտական ներկայացուցիչ դեսպան Պարույր Հովհաննիսյանը, Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան:

ԵԽԽՎ նախագահ Լիլիան Մորի Պասքիեն ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանի ուղեկցությամբ մարտի 27-ին այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Մարտի 27-ին ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լիլիան Մորի Պասքիեն երկկողմ հանդիպումից հետո հանդես են եկել համատեղ հայտարարությամբ: Խորհրդարանի նախագահն իր խոսքում նշել է, որ հանդիպման ընթացքում քննարկել են ԵԽԽՎ-ի հետ համագործակցության ոլորտները: Ազգային ժողովի նախագահի խոսքով՝ կարեւորվել են փոխգործակցությունը Եվրոպայի խորհրդի եւ նրա ինստիտուտների՝ ԵԽԽՎ-ի, մարդու իրավունքների հանձնակատարների, Վենետիկի հանձնաժողովի հետ եւ մյուս բոլոր կառույցների դերակատարումը՝ մեր երկրում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացներին աջակցելու համար:

✓ **Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական Ներկայացուցիչների Համաչինական Ժողովի Մշտական Կոմիտեի Նախագահի տեղակալի գլխավորած պատվիրակության այց - Ապրիլի 3-7**

Խորհրդարանի ղեկավար Արարատ Միրզոյանն ապրիլի 4-ին ընդունել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական Ներկայացուցիչների համաչինական ժողովի Մշտական կոմիտեի նախագահի տեղակալ Շեն Յուեյուեի գլխավորած պատվիրակությանը:

ՀՀ ԱԺ փոխնախագահ, ԱԺ Հայաստան-Չինաստան բարեկամական խմբի ղեկավար Լենա Նազարյանը, խմբի անդամները եւ պատգամավորները ապրիլի 4-ին հանդիպել են պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում գտնվող Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի Մշտական կոմիտեի նախագահի տեղակալ Շեն Յուեյուեի գլխավորած պատվիրակության հետ:

✓ **Ռումինիայի արտաքին գործերի նախարարության պետքարտուղար Դան Նիկուլեսկուի գլխավորած պատվիրակության այց - Ապրիլի 3-4**

ՀՀ ԱԺ փոխնախագահ Լենա Նազարյանն ապրիլի 3-ին ընդունել է Ռումինիայի արտաքին գործերի նախարարության պետքարտուղար Դան Նեկուլաեսկուի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցում էին ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը եւ ԱԺ

եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը:

- ✓ **Ճանաչողական այցով Հայաստան այցելած Իտալիայի խորհրդարանական ներկայացուցչական պատվիրակության հետ հանդիպում - ապրիլի 5**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն ապրիլի 5-ին ընդունել է ճանաչողական այցով Հայաստան այցելած Իտալիայի խորհրդարանական ներկայացուցչական պատվիրակությանը՝ կազմված Սենատի եւ Պատգամավորների պալատի անդամներից:

- ✓ **ՍԾՏՀ ԽՎ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողովի 52-րդ նիստ - Ապրիլի 9-12**

- ✓ **Չեխիայի պաշտպանության եւ զինված ուժերի նախարարի գլխավորած պատվիրակության հետ հանդիպում – ապրիլի 10**

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանն ապրիլի 10-ին ընդունել է Չեխիայի Հանրապետության պաշտպանության եւ զինված ուժերի նախարար Լյուբոմիր Մետնարի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա է եղել ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը:

- ✓ **House Democracy Partnership -ի պատվիրակության այց– ապրիլի 18**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն ապրիլի 17-ին ընդունել է HDP ներկայացուցչական պատվիրակությանը, որի կազմում են եղել թե՛ դեմոկրատներ, թե՛ հանրապետականներ:

Ընդլայնված կազմով հանդիպմանը մասնակցել են ԱԺ փոխնախագահ Վահե Էնֆիաջյանը, պատգամավորներ Լիլիթ Մակունցը, Էդմոն Մարուքյանը, Ռուբեն Ռուբինյանը, Վլադիմիր Վարդանյանը, Մխիթար Հայրապետյանը, Բաբկեն Թունյանը, Մանե Թանդիլյանը:

Հայաստան այցելած ԱՄՆ կոնգրեսականները ՀՀ ԱԺ պատգամավորներ, Հայաստան-ԱՄՆ բարեկամական խմբի անդամներ Գայանե Աբրահամյանի եւ Հովհաննես Հովհաննիսյանի ուղեկցությամբ ապրիլի 17-ին այցելել են Ծիծեռնակաբերդի 1915 թվականի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

Երեւանում գտնվող ԱՄՆ կոնգրեսականների խումբը, որոնք ներկայացնում են Ներկայացուցիչների պալատի ժողովրդավարական գործընկերության հանձնախումբը,

ապրիլի 18-ին խորհրդարանում հանդիպել են ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցի, ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի եւ Հայաստան-ԱՄՆ խորհրդարանական բարեկամական խմբի որոշ անդամների հետ:

✓ **Հանդիպում Կամբոջայի Թագավորության պատվիրակության հետ – ապրիլի 25**

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանն ու ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանն ապրիլի 25-ին ընդունել են Կամբոջայի Թագավորության պատվիրակությանը՝ արտաքին գործերի եւ միջազգային համագործակցության նախարարության պետքարտուղար Աուչ Բորիթի գլխավորությամբ:

✓ **Չեխիայի խորհրդարանի պատգամավորների պալատի սահմանադրական և իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Մարեկ Բենդայի գլխավորած պատվիրակության այց - Ապրիլի 28-ից մայիսի 2-ը**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն ապրիլի 29-ին ընդունել է Չեխիայի Հանրապետության խորհրդարանի Պատգամավորների պալատի սահմանադրական եւ իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Մարեկ Բենդայի գլխավորած պատվիրակությանը:

Ապրիլի 29-ին ՀՀ ԱԺ Հայաստան-Չեխիա բարեկամական խմբի ներկայացուցիչները հանդիպել են Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի սահմանադրական եւ իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ, Չեխիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Մարեկ Բենդայի գլխավորած պատվիրակության հետ:

Չեխիայի Հանրապետության խորհրդարանի Պատգամավորների պալատի սահմանադրական եւ իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ, Չեխիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Մարեկ Բենդայի գլխավորած պատվիրակությունն ապրիլի 30-ին ՀՀ ԱԺ Հայաստան-Չեխիա բարեկամական խմբի ղեկավար Գայանե Աբրահամյանի ուղեկցությամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

✓ **Չեխիայի խորհրդարանի Սենատի գյուղական տարածքների զարգացման մշտական մշտական հանձնաժողովի պատվիրակության այց՝ Սենատի փոխնախագահ Միլան Շտեխի և նշված հանձնաժողովի նախագահ Միրոսլավ Նենուտիլի գլխավորությամբ - մայիսի 5-ից 9-ը**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը մայիսի 6-ին ընդունել է Չեխիայի Հանրապետության խորհրդարանի Սենատի փոխնախագահ Միլան Շտեխի գլխավորած պատվիրակությանը, որում ընդգրկված են Գյուղական տարածքների զարգացման

հանձնաժողովի անդամներ: Հանդիպման ավարտին Միլան Շտեխն Արարատ Միրզոյանին հրավիրել է այցելել Չեխիայի Հանրապետություն:

ՀՀ ԱԺ Հայաստան-Չեխիա բարեկամական խմբի ղեկավար Գայանե Աբրահամյանը, անդամներ Վահագն Հովակիմյանը, Վիկտոր Ենգիբարյանը եւ Կորյուն Մկրտչյանը մայիսի 6-ին հանդիպել են Չեխիայի խորհրդարանի Սենատի փոխնախագահ Միլան Շտեխի գլխավորած պատվիրակության հետ:

ՀՀ ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարազդատ Կարապետյանը մայիսի 6-ին հանդիպել է Չեխիայի խորհրդարանի Սենատի փոխնախագահ Միլան Շտեխի գլխավորած պատվիրակության հետ, որի անդամները հիմնականում Գյուղական տարածքների զարգացման մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներն են:

✓ **Ավստրիայի Հանրապետության Ազգային խորհրդի Ավստրիա-Հայաստան բարեկամության խմբի այց - Մայիսի 10-ից 13-ը**

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Վահե Էնֆիաջյանը մայիսի 10-ին ընդունել է Ավստրիայի Ազգային խորհրդի Ավստրիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ղեկավար Գուդրուն Քուգլերի գլխավորած պատվիրակությանը:

ՀՀ ԱԺ Հայաստան-Ավստրիա բարեկամական խմբի ներկայացուցիչները մայիսի 10-ին հանդիպել են Ավստրիայի Ազգային խորհրդի Ավստրիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ղեկավար Գուդրուն Քուգլերի գլխավորած պատվիրակության հետ:

Հայաստանում գտնվող Ավստրիայի Ազգային խորհրդի Ավստրիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ղեկավար Գուդրուն Քուգլերի գլխավորած պատվիրակությունը մայիսի 11-ին ԱԺ Հայաստան-Ավստրիա բարեկամական խմբի ղեկավար Վիկտոր Ենգիբարյանի ուղեկցությամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

✓ **ՀՀ ԱԺ և ԱՀ ԱԺ միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի հերթական նիստ - Մայիսի 14-ից 16-ը**

✓ **ԳԴՀ Բունդեսթագի փոխնախագահ Թոմաս Օփերմաննի գլխավորած պատվիրակության այց - Հունիսի 14-15**

ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը հունիսի 14-ին ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի փոխնախագահ Թոմաս Օպերմանի գլխավորած պատվիրակությանը:

ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը հունիսի 14-ին ընդունել է Գերմանիայի Բունդեսթագի փոխնախագահ Թոմաս Օպերմանի գլխավորած պատվիրակությանը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի փոխնախագահ Թոմաս Օպերմանի գլխավորած պատվիրակությունը հունիսի 14-ին ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանի ուղեկցությամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

✓ **Հանդիպում Վիետնամի խորհրդարանական պատվիրակության հետ – հունիսի 25**

ՀՀ խորհրդարանի ղեկավար Արարատ Միրզոյանը հունիսի 25-ին ընդունել է Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահի տեղակալ Նգույեն Ման Թիենի գլխավորած պատվիրակությանը:

✓ **Շվեդիայի Թագավորության խորհրդարանի նախագահի այց - Օգոստոսի 26-28**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն օգոստոսի 26-ին ընդունել է իր հրավերով Հայաստանում գտնվող Շվեդիայի Թագավորության Ռիկսդագի նախագահ Անդրեաս Նորլենին:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանն օգոստոսի 26-ին ընդունել է իր հրավերով պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Շվեդիայի Թագավորության Ռիկսդագի նախագահ Անդրեաս Նորլենի գլխավորած պատվիրակությանը: ***Ընդլայնված կազմով*** հանդիպմանը մասնակցել են նաեւ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանը, ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահներ, ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչներ:

Պաշտոնական այցով Երեւանում գտնվող Շվեդիայի Թագավորության Ռիկսդագի նախագահ Անդրեաս Նորլենի գլխավորած պատվիրակությունը ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանի ուղեկցությամբ օգոստոսի 27-ին այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: